

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԻՆԳԱ ԱՇՈՏԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

**ՍԵՐՈ ԽԱՆՁԱԳՅԱՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՎԵՍԱԸ**

**Ժ.02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2015**

**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի  
ինստիտուտում:**

- Գիտական ղեկավար՝** բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Ն. Ժ. Սարգսյան
- Պաշտոնական ընդդիմախոսներ՝** բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Լ. Կ. Եզեկյան
- բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Ա. Վ. Գալստյան
- Առաջատար կազմակերպություն՝** Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական  
լեզվա հասարակագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2015թ. նոյեմբերի 2-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում՝ գործող ԲՈՅ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

**Հասցեն՝** 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. հոկտեմբերի 2-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝**  
**բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ** **Ն. Մ. Սիմոնյան**  
**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**Թեմայի արդիականությունը:** Մինչ օրս Սերո Խանգադյանի ստեղծագործությունները լեզվաոճական բավարար քննության չեն արժանացել: Գրողի ստեղծագործությունների վերաբերյալ առավել շատ հանդիպում են գրականագիտական հոդվածներ, մեմագրություններ, ինչպես նաև հեղինակի

կենսագրությանն ու գրական ժառանգությանը նվիրված առանձին գրքեր<sup>1</sup>: Դիտարկվել են առանձին պատմավեպերի լեզվական տարրեր կամ միավորներ, կամ էլ մի քանի երկերի լեզվի և ոճի հարցեր: «Ժամանակակից հայ արձակի լեզվի և ոճի հարցեր»<sup>2</sup> ատենախոսության մեջ խորհրդային մի քանի գրողների ստեղծագործությունների քննության հետ ընդհանրական ուսումնասիրվել են Ս. Խանգաղյանի վեպերից մի քանիսը՝ «Մխիթար Սպարապետ» (1961), «Խոսեք, Յայաստանի լեռներ» (1976), «Թագուհին հայոց» (1978), «Յողը» (1957): «Սերո Խանգաղյանի՝ գյուղը պատկերող ստեղծագործությունների լեզուն և ոճը»<sup>3</sup> ատենախոսության ուսումնասիրության փաստական նյութը հեղինակի «Յողը», «Սեր գնդի մարդիկ» վեպերն են ու մի քանի պատմվածքները: Սերո Խանգաղյանի պատմավեպերի դարձվածների և պատկերավորման միջոցների ուսումնասիրության վերաբերյալ հայտնի են նաև առանձին հոդվածներ<sup>4</sup>:

Ս. Խանգաղյանի արձակի լեզվաոճական առանձնահատկությունների ուսումնասիրման անհրաժեշտությունը պայմանավորված է մի կողմից այն նշանակալից ավանդով, որ ունի գրողը հայ արձակի զարգացման գործում, մյուս կողմից՝ այն արդիականությամբ, որը բնորոշ է նրա ստեղծագործությունների մեծ մասին:

**Ատենախոսության նպատակն ու խնդիրները:** Աշխատանքի գլխավոր նպատակը մեծ գրողի խոսքարվեստի գնահատությունն է՝ քննության նյութ դարձնելով հիմնականում նրա գեղարվեստական ստեղծագործությունների լեզուն:

Առաջին հերթին փորձել ենք լուծել հետևյալ հիմնախնդիրները.

ա) կատարել բառապաշարի լեզվաոճական համակողմանի քննություն,

բ) ուսումնասիրել Ս. Խանգաղյանի խոսքարվեստին բնորոշ քերականական (ձևաբանական և շարահյուսական) իրողությունները,

գ) հնարավորինս համակարգված և համակողմանիորեն բացահայտել և վերլուծել ոչ միայն ընդհանրապես խանգաղյանական խոսքարվեստի հատկանիշներն ու յուրահատկությունները, այլև պարզել դրանց հատուկ գծերը՝ ըստ լեզվի մակարդակների, ըստ ժանրային պատկանելության, հարկ եղած դեպքում նաև ըստ առանձին ստեղծագործությունների:

**Գիտական նորույթը:** Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է նյութի ընտրությամբ, նաև նրանով, որ առաջին անգամ հանգամանակից ուսումնասիրության է ենթարկվում Ս. Խանգաղյանի արձակի լեզուն ամբողջությամբ՝ ներառելով բառապաշարային և քերականական իրողությունների համակողմանի քննությունը: Կատարված դիտարկումների հիման վրա էլ առանձնացվել են հեղինակի լեզվի զարգացման հինգ հիմնական շրջափուլերը, ժանրային

---

<sup>1</sup>Տե ս Գ. Յայրյան, Սերո Խանգաղյան, Ե., 1975, 76 էջ: Զ. Կոստանյան, Ակնարկներ վերջին տասնամյակի սովետահայ արձակի լեզվի և ոճի մասին, Ե., 1957, 224 էջ: Ս. Աղաբաբյան, Սերո Խանգաղյան, Ե., 1967, 655 էջ: Գ. Յայրյան, Սերո Խանգաղյան. մենագրություն, Ե., 1979, 260 էջ: Թ. Պետրոսյան, Սերո Խանգաղյանի պատմական արձակը, Ե., 1986, 184 էջ: Ս. Աբրահամյան, Պատմվածքը Սերո Խանգաղյանի արձակի ժանրային համակարգում, Ե., 1992, 88 էջ: Զ. Բալայան, Սերո Խանգաղյանի կտակը, «Ազգ» օրաթերթ, Ե., 2003, N120: Է. Զոհրաբյան, Լեռնային լեզբեր, Ե., 2007, 288 էջ: Ս. Արզումանյան, Սովետահայ վեպը, Ե., 1986, գ. 3, 456 էջ:

<sup>2</sup>Վ. Մանուկյան, Ժամանակակից հայ արձակի լեզվի և ոճի հարցեր, մենագրություն, Ե., 1992, 24 էջ:

<sup>3</sup>Ն. Մինասյան, Ս. Խանգաղյանի՝ գյուղը պատկերող ստեղծագործությունների լեզուն և ոճը, ատենախոսություն, Ե., 1973, 158 էջ:

<sup>4</sup>Տե ս Ռ. Մարգարյան, Լեզվի պատկերավորման միջոցները Ս. Խանգաղյանի պատմավեպերում, Կանթեղ, Ե., 2003, թիվ 1: Ռ. Մարգարյան, Դարձվածները և նրանց ոճական արժեքը Ս. Խանգաղյանի պատմավեպերում, Կանթեղ, Ե., 2006, թիվ 2:

պատկանելությանը պայմանավորված յուրահատկությունները, ինչպես նաև առանձին ստեղծագործությունների բնորոշ հատկությունները, հատուկ ուշադրություն է դարձվել Ս. Խանգադյանի լեզվի ժողովրդայնությանն ու արտահայտչականությանը նպաստող բառապաշարային, ձևաբանական ու շարահյուսական դրսևորումներին, համապատասխան լեզվաոճական հնարներին:

**Ուսումնասիրության փաստական նյութը:** Աշխատանքի համար լեզվական նյութ են ծառայել Սերո Խանգադյանի երկերի ժողովածուի վեցհատորյակը, «Հայրենապատում» երկի քառահատորյակը, նաև առանձին վեպեր, վիպակներ, պատմվածքներ, ավանդագրույցներ, հեքիաթներ, որոնց միջոցով բացահայտվում, ի ցույց են դրվում հեղինակի ստեղծագործությունների լեզվի զարգացումը, նրա լեզվաշինական ակտիվ գործունեությունը: Շեշտը դրվում է գլխավորապես գեղարվեստական արձակի քննության վրա: Հրապարակախոսական, գիտական բնույթի շատ հոդվածներ, էլույթներ ու նամակներ դուրս են մնացել ատենախոսության ուսումնասիրության շրջանակներից:

**Ատենախոսության տեսական ու գործնական նշանակությունը:** Ատենախոսության մեջ արծարված խնդիրները վերաբերում են հայոց լեզվի բոլոր բաժիններին, հատկապես լեզվաբանական ոճագիտությանը, և նրա դրույթները կարող են օգտակար լինել ուսուցման ընթացքում, ինչպես նաև լեզվի և ոճի հարցերով զբաղվողներին: Կարող են դառնալ կարևոր աղբյուր հետազայում Ս. Խանգադյանի խոսքարվեստով հետաքրքրվողների համար՝ հիմք տալով նոր դրույթների ու տեսակետների:

**Ուսումնասիրության մեթոդը:** Աշխատանքը հիմնականում կատարվել է նկարագրական-վերլուծական մեթոդով, ինչպես նաև կիրառված են լեզվական փաստերի համադրման համաժամանակյա և տարաժամանակյա եղանակները:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք ունեն իրենց ենթագլուխները, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և համառոտագրություններից: Աշխատանքի ծավալը մեքենագիր 156 էջ է:

Ատենախոսությունը քննարկվել է ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

Կան ատենախոսության թեմային առնչվող չորս հոդվածներ և մեկ գրքույկ, որոնց ցուցակը ներկայացվում է սեղմագրի վերջում:

### **Ատենախոսության հիմնական բովանդակությունը**

**Առաջին գլուխը՝ «Բառագիտական իրողություններ»,** բաղկացած է չորս բաժնից՝ «Բառապաշարային իրողություններ», «Իմաստաբանական իրողություններ», «Բառակազմական իրողություններ», «Դարձվածային իրողություններ», որոնք էլ իրենց հերթին կազմված են համապատասխան ենթաբաժիններից:

Առաջին բաժնում դիտարկվում են **համագործածական և ոչ համագործածական բառերի** կիրառական առանձնահատկությունները, որոնք ոճավորման ամենատարբեր արտահայտչամիջոցներով նպաստել են խոսքի թարմությանն ու ասելիքի խորությանը: Առանձնացվում են հատկապես փոխաբերական նշանակություն ունեցող համեմատության, անձնավորման նրբերանգներով համագործածական բառերը. «Իսկ գիշերն իր կանթղներն էր վառել Կապուտջիղի գույգ գագաթներին» (ԼՀձ, 519): Նկատելի է, որ փոխաբերությունը խորացնելու

նպատակով մի բառի փոխաբերական իմաստի անհրաժեշտության հիմունքով փոխաբերաբար են գործածվում նաև այլ բառեր<sup>5</sup>:

**Ոչ համագործակցական բառերը** ներկայացված են ըստ համապատասխան բառաշերտերի: **ժողովրդախոսակցական բառերի** գործածություններն արձակում հաճախադեպ են, որոնք հիմնականում հանդիպում են հերոսների խոսքում, օր.<sup>6</sup> **քոնոնք, ես, եհ, էդքան, գխկտվել, շճնել, գեղ, հեչ** և այլն:

Խանգադրյալական խոսքն ամբողջանում, համ ու հոտ է ստանում **բարբառային բառերի** ու արտահայտությունների առատ օգտագործմամբ: Գործածված են հիմնականում գործիայան խոսվածքի զանազան բառեր, արտահայտություններ: Ի տարբերություն ժողովրդախոսակցական բառերի՝ բարբառային բառերը «գործածվում են մեկ բարբառում կամ խոսվածքում և հասկանալի են միայն տվյալ միջավայրում»<sup>6</sup>: Այսպես՝ **շնաթակ, իծահագ, պատճառավոր, ճաղար, ժանգառք, լիսեմն**: Առանձնակի ուշադրություն են գրավում բայերի բարբառային գործածությունները, հարադրությունները՝ **դոճել, լվնորել, լոք տալ** (թռչել), **պեծին տալ, ճել անել** (արագացնել) և այլն: Հանդիպում են օտար լեզուներից անցած և բարբառներում ակտիվ գործածություն ունեցող փոխառյալ բառեր՝ **պերերիվ, ֆառ, մազալու, մութաքա, ջանդաք, ջհանդամ, յարա, նոքար** և այլն: Հերոսների խոսքում ոճավորման նպատակներով հաճախադեպ են **գռեկաբանությունները**:

**Հնաբանությունների** գործածումը հիմնականում պայմանավորված է անցյալի թեմատիկայով, պատմական միջավայրը ճիշտ վերակերտելու նպատակով: Շատ են բառային հնաբանությունները, որոնք ժամանակակից լեզվում փոխարինվել են նոր բառերով. **զմելի՝** «զմելին՝ փոքրիկ և հատու յոյժ, ածելի վարսավիրաց» (ՆՀԲ), **փսիաթ** (եղեգնից՝ ծղոտից՝ բույսերի կեղևից հյուսած փռոց, խսիր): Բառային հնաբանությունների մեկ այլ առանձնահատկությունն էլ իմաստային կողմն է. բառը կարող է գործածվել հին նշանակությամբ, իսկ եթե բազմիմաստ է, կարող է հնամալ իմաստներից մեկը (կամ մի քանիսը), օր.<sup>6</sup> «Մինայի Ազատը մի քանի հարյուր **գործավորներ** ունի» (ԹՀ, 20), արդի հայերենի համար ոչ կենսունակ՝ **բանվոր** իմաստով է, ոչ թե՛ **գործույնյա**: Քերականական հնաբանությունները հիմնականում գրաբարյան դրսևորումներ են, որոնք ոճական տեսակետից այդքան էլ ակտիվ չեն: Հանդիպում են նախդիրներով, հոլովական ու բայական ձևերով կազմված հնաբանություններ՝ **հայնկոյս, քաջաց, կարգավ, արասցե** և այլն: Հնաբանությունների գործածության հաճախականությունն ցկատվում է հատկապես պատմավեպերում (օր.<sup>6</sup> «Թագուհին հայոց», «Խոսեք, Հայաստանի լեռներ»): Արտահայտչականության առումով պատմաբառերը անհամեմատ զիջում են հնաբառերին, մատնանշում են հատկապես ռազմական պարագաներ (**մարտակառք, գեղարդ, տեգ**), պաշտոններ և կոչումներ (**դրանիկ, մարզպան, համհարզ, մատռվակ, դահնապետ**), այլ հասկացություններ՝ **խիտոն, ծիրանի, կառախունք, գուզա**: Գործածված են նաև աշխարհաբարյան փուլի պատմաբառեր՝ արտահայտելով հիմնականում խորհրդային շրջանի սկզբնական ժամանակահատվածի կյանքը պատկերող գաղափարներ, հարաբերություններ, անվանումներ՝ **ճեպ, կոմսոնու, կոմունիստ, կոլխոզ, գյուղսովետ, աշխօր** և այլն: Կան նաև հեթանոսական շրջանի հոգևոր կյանքը պատկերող անվանումներ՝ **քուրմ, եռաժանի, դից, կրակարան, նզույր, բագին**: Նման բառերով հարուստ է հիմնականում «Թագուհին հայոց» վեպի լեզուն:

<sup>5</sup>Տե՛ս Շ. Ղազարյան, Համագործակցական բառերի ոճական արժեքը Զ. Օշականի պատմվածքներում, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի գեկուցումներ, Ե., 2011, էջ 51:

<sup>6</sup>Լ. Եգեկյան, Ռաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը, Ե., 1975, էջ 92:

**Նորաբանությունները** «հասարակական կյանքի, գիտության, տեխնիկայի զարգացման հետևանքով կամ անհատական ոճական նկատառումներով առաջացած բառեր են»<sup>7</sup>: Վերջիններս հայտնի են հեղինակային նորակազմություններ կամ հեղինակային բառեր անվանումով: Նորակազմությունների գործածության աճ նկատվում է հեղինակի վերջին շրջանի գործերում, հատկապես «Շուշի» վեպում: (Հմնտ.՝ նախորդ շրջանում տպագրված «Թագուհին հայոց» վեպում նորակազմությունների թիվը 21 է, իսկ «Շուշի» վեպից մենք դուրս ենք գրել 30 այդպիսի նորակազմություն): Ինչ վերաբերում է նորաբանություններին, առանձին, ըստ կադապրների, ատենախոսության մեջ ներկայացվում է հարյուրը գերազանցող բառերի մի ցանկ:

Արձակում տեղ գտած նորակազմություններն առանձնանում են կառուցվածքային զանազան տիպերով: Աշխատանքում դիտարկվում են տարբեր բառեր՝ տարբեր կառուցվածքներով և շարահյուսական տարբեր հարաբերություններով: Օր.՝ **Եղենածոց**, ած.-եղեն+ծոց: Գոյական+գոյական, որոշիչ+որոշյալ: «Օ՝, Նուար, օ՝, **եղենածոց** կին» (ԹՀ, 39), **Վրանահյուս**, ած.-վրան+հյուս (հյուսել): Գոյական+բայարմատ, միջոցի անուղղակի խնդիր+գերադաս անդամ: «Գրեթե դողալով մտանք խանի **վրանահյուս** ամարաթը» (Շ, 57) և այլն: Կան մանողությանը կերտված հարադրություններ (ոտքերին տալ-**ոտքերին անել**, գույնը զգել-**գույնը զնալ**, գիր անել-**գիր շինել**), դարձվածային նշանակությամբ (**մազ կուլ տալ-վարսավիրություն անել**, **քացախ կտրել-նեղստել**): Ս. Խանգադյանը նորակազմություններ է կերտում հիմնականում խոսակցական բառաշերտին բնորոշ կադապրներով, ձևերով ու միջոցներով: Խոսքի պատկերավորությունը շեշտելու նպատակով հեղինակը գործածական ածանցավոր բառերի համաբանությամբ ստեղծում է նորերը. «*ժայռեղեն* ու *կիրճեղեն*» (ԱԵՄ, 70), «*գինևետ* ու *երզևետ*» (Շ, 157), «*որդնոտել*, **գորտնոտել**» (ՀՀԱՀ, 266): **-Ական** ածանցը կազմում է ածականներ՝ արտահայտելով «նախատիպ գոյականին վերաբերող հատուկ ընդհանուր բառակազմական նշանակություն»<sup>8</sup>. «Սա իր **ընպական** ու բուժիչ հատկություններով առավել է» (Հ, 9, 394): Կան բառաբարդման եղանակով կազմված հիանալի դիպվածային նորաբանություններ. կցական **բովպետ** (ԹՀ, 87), **աջպուտ** (ՄԵ, 516), հողակապով՝ **փոքրափոր** (Շ, 13), **գինենշուշ** (Շ, 287), **քրմակեց** (ԹՀ, 201), հարադրությամբ՝ **նուռ կտրել**, **բոց կտրել**: Խոսքին վերամբարձություն, հինհայերենյան հնչեղություն, բարբառային արտասանություն հաղորդելու նպատակով հեղինակը կերտել է ոչ կանոնական կազմություններ՝ **խաբկանել**, **լուծանվել**, **նշանց**, **շամբշել**:

Խանգադյանական արձակի բառապաշարի կարևոր շերտերն են **օտարաբանությունները և փոխառությունները**: Սխալ է կարծել, որ նման բառերը զուրկ են ոճական արժեքից և հատուկ են միայն գրական լեզվի այս կամ այն փուլին<sup>9</sup>: Օտար, փոխառյալ բառերի հաճախական գործածումը նկատվում է զլխավորապես պատմավեպերում՝ պատմաքաղաքական իրադարձությունները, տնտեսական իրավիճակն ու հարաբերությունները տվյալ ժամանակաշրջանին համապատասխանեցնելու, իրականությանը մոտեցնելու թելադրանքով<sup>10</sup>: Հանդիպում են *արաբերեն* բառեր՝ **մուհալլիմ** (ուսուցիչ), **շիատ** (վկա), *թուրքերեն*՝ **ասկյար**, **օմբաշի** (տասնապետ), *պարսկերեն*՝ **բաբա**, **քեշիշ** (քահանա), **րախի** և այլն:

<sup>7</sup>Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 157:

<sup>8</sup>Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցների ժամանակակից հայերենում, Ե., 1978, էջ 65:

<sup>9</sup>Տե՛ս Լ. Եզեկյան, նշվ.աշխ., Ե., էջ 85:

<sup>10</sup>Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 9:

Գործածված են նաև օտար բառերով նախադասություններ, կապակցություններ՝ հերոսների խոսքը տիպականացնելու նպատակով. «Ալլահ աքպալ...» (ԽՅԼ, 446), «ճայն հերթ» (ՄԳՄ, 10):

Երկրորդ բաժինն է «**Իմաստաբանական իրողություններ**», որում անդրադառնել ենք նախ բազմիմաստ և մենիմաստ բառերին: Հիմնականում հաճախադեպ են բառի բազմիմաստային տարբեր նշանակություններով ձևերը, որոնցում նկատվում են հեղինակի՝ բառիմաստը նորովի ներկայացնելու միտումները. օր.՝ **քաշել** բայը հանդիպում է նաև **ավել, ավելով մի կողմ տանել** (ՄԵ, 473), **վերցնել, ձեռքն առնել** (ԱՄ, 240), **կծկվել** (Հ, 88), **հագնել** (ԱՊ, 357) իմաստներով: Բազմիմաստ բառերի՝ ոճականորեն աչքի ընկնող զանազանության համեմատությամբ **մենիմաստ** բառերն այդքան էլ ակտիվ գործածություն չունեն: Իհարկե, հատկապես պատմվածքներում հանդիպում են տիպական կիրառություններ, որոնցում մենիմաստ բառերն ունեն տարբեր նրբերանգներ. «Դենս նստած է **մոմագույն** ծերունի Առաքել հայրիկը, որ սասե **խաչքար** է այս Մեսրոպավան գյուղի Մեսրոպի վանքից պոկված՝ **մամուռ** հոնքերով» (ԽՄՊ, 530): Երկրորդ ենթաբաժինը նվիրված է հոմանիշ, հականիշ, հարանուն և համանուն բառերի կիրառական ինքնատիպությանը: **Հոմանիշների** գործածման դեպքում կարևոր է դրանց իմաստային ընդհանրությունը: Աչքի են ընկնում մեկ բառի արժեք ունեցող զծիկով կապակցությունները՝ **կրակ-ճրագ, էշ-ավանակ, գող-ավազակ, աղբ-ապականություն**: Առանձնանում են նաև բարբառային, խոսակցական բաղադրիչներով կազմվածները՝ **սիրուն-խորոտ, հասած-փլխած, փոթ-ավելորդ, ուռած-տռած**: Նման գործածություններից հեղինակը դիմում է զվիսավորապես պատմվածքների լեզվի ոճավորման նպատակներով: Առանձնակի ուշադրության են արժանի այն հոմանիշները, որոնք տվյալ համատեքստից դուրս ամենևին էլ հոմանիշներ չեն՝ **ալրոտ-մոխրագույն, վարծ-բաժին, քնած-մեռած** և այլն: Որոշակի խմբավորումներով, նույն սկզբունքով ներկայացվում են բուն, ժխտական, տեքստային հականիշները, ինչպես նաև հարանուն<sup>11</sup> և համանուն բառերը՝ իրենց ենթատեսակներով:

«**Բառակազմական իրողություններ**» բաժնում քննվում են բառակազմության տիպերի, եղանակների ու միջոցների կիրառական յուրահատկությունները, տրվում առավել գործուն կաղապարները: Բաղկացած է երեք ենթաբաժնից՝ «**Բառաբարդում: Համադրական և վերլուծական տիպեր**», «**Հապավում**», «**Ածանցում**»: Մեծ թիվ են կազմում հատկապես բայական կցական կրկնավորները՝ **կասկարմրել, եռմեռալ, լավիփել**: Բաղադրությունների **վերլուծական (հարադրական) տիպին** հատուկ են **կրկնում և հարադրում** եղանակները: Առավել գործածական են անվանական բաղադրիչներով հարակցական կրկնավորները՝ մակբայական և ոչ մակբայական իմաստներով՝ **ալիք-ալիք** թափվել, **պատառ-պատառ** արտեր: Արձակի լեզուն հարուստ է հարադրական բայերով՝ **հոշ անել, իրենով անել, փուլ ածել, պինդ կենալ, դեն անել** և այլն: Հանդիպում են նաև զուգադրական բայական հարադրություններ, որոնցից ոճավորման դիպուկությամբ աչքի են ընկնում հատկապես բարբառային և խոսակցական բնույթի կառույցները՝ **թթվել-թռախել, կապել-կշկռել**: Ժողովրդական մտածողությանը բնորոշ են **տալ-ով** կազմվածները՝ **կլափին տալ, տրճիկ տալ, օրկուն տալ**:

**Ածանցում:** Լինելով բառային կազմի զարգացման կարևորագույն միջոցներից՝ ածանցումը բառաբարդումից տարբերվում է նրանով, որ «ածանցավոր բառի

<sup>11</sup>Տե՛ս Գ. Խաչատրյան, Հայրենների ոճագիտական և կառուցվածքային ուսումնասիրություններ, Ե., 2013, 198 էջ:

բաղադրիչներից մեկը (ածանցը) գուրկ է բառային իմաստից»<sup>12</sup>: Ածանցը, չունենալով անկախ գործածություն, իմաստային նշանակությունը ստանում է բաղադրության մեջ: Պատկերավորության դրսևորմանը նպաստում են հիմնականում ածանցյալների հնացած, սահմանափակ կամ բարբառային բաղադրիչներով կիրառությունները: «Մեզ շրջապատող գյուղորայքը վերջին աղքատության մեջ է» (Հ, Ա, 221), «Ամերեխա տունը անշուր առու է» (ՄԳՄ, 326):

**Հապավում:** Խոսքի ոճավորման գործում հապավյալների կատարած դերն ու նշանակությունն աննկատ ու չեզոք են, իսկ գործածության հաճախականությունը պայմանավորված է երկի բովանդակությամբ: Հեղինակը տվյալ ժամանակաշրջանին բնորոշ կենցաղը, կյանքն ու իրադարձությունները բավականին շոշափելի և իրական նկարագրելու միտումով դիմել է հապավյալների տարատեսակ կիրառությունների գործադրմանը. «**Ձինկոմն էլ է եղ ծին ուզում տանի, միլպետն էլ, հլա կուսըջկոմն էլ**» (ԿպԱ, 282):

Չորրորդ բաժինն է «**Պարծվածային իրողություններ**», որն ունի «**Պարծվածային միավորներ**» և «**Առածներ, ասացվածքներ և թևավոր արտահայտություններ**» ենթաբաժինները: Նշված միավորները Ս. Խանգադյանի արձակում լայն կիրառություն ունեն, որը պայմանավորվում է ոչ միայն ստեղծագործությունների թեմատիկ ուղղվածությամբ, կերպարների ընտրությամբ, լեզվական կողմնորոշման հանգամանքներով, այլև գրողի ժողովրդական մտածողությամբ: Բերենք մի քանի տիպական նմուշներ. «**Խելքը տանուլ է տվել**» (Պ, 331), «**Պուզ ճանփես մի՛ ծռի, եգոր**» (ԽԽ, 334), «**Աչքերս թափվեն, սիրտդ կտորեցի**» (ՕՀ, 199) և այլն: Հեղինակը դրանց հիման վրա նմանությամբ, մասամբ էլ փոփոխության ենթարկելով կերտել է նոր դարձվածային միավորներ. «**Աչքերդ հանեն, տեղն աղ ածեն**» (ՇԱ, 483), «**Պատին կպած ճանճն էլ է տան տղամարդ**» (ԾՁՀ, 285): Նույն ենթաբաժնի հետագա շարադրանքում համապատասխան դասակարգումներով ներկայացվում են բառային, հաղորդակցական, եղանակավորող ԴՄ-ները, քննվում են դրանց վերահիմաստավորման, բաղադրիչների քանակի, կազմության և այլ հարցեր: Արձակում բավականաչափ առատորեն գործածված են նաև առածները, ասացվածքները, թևավոր խոսքերը, անեծքներն ու օրհանմքները, որոնք նույնպես վերլուծվում ու ներկայացվում են ըստ իրենց բնորոշ առանձնահատկությունների:

**Երկրորդ գլուխը՝ «Թերականական իրողություններ»**, ունի երկու ենթաբաժին՝ «**Ա. Ձևաբանական առանձնահատկություններ**» և «**Բ. Շարահյուսական առանձնահատկություններ**»: Առաջին ենթաբաժնում ներկայացվել են ձևաբանական ոճագիտության մի քանի իրողություններ: **Գոյականի** ոճական դրսևորումները ձևաբանական մակարդակում առանձնանում են իմաստային-քերականական խմբերի յուրահատուկ կիրառություններով: Հասարակ գոյականները ստանում են անձնավորման նրբերանգներ. «Հե՛յ, հեյ...**Ջրաղացս** բանում է, բանո՛ւմ է...Ոչ իր ծայրը հասավ գյուղի ականջին, ո՛չ էլ **ջրաղացի**» (ՋՁԶ, 294): Առավել բնորոշ են անձնանուն գոյականների՝ հերոսների անունները ընդհանրական, ամբողջական հասկացությամբ արտահայտող կիրառությունները՝ **Մարոներ** (ԵՏՕ, 533), **մանաններ** (Կ, 529) և այլն: **Հոգնակի թվի** կազմությունը հիմնականում համապատասխանում է գրական լեզվի նորմերին, սակայն ոճական նպատակով հանդիպում են նաև շեղումներ, որոնք խոսքը դարձնում են բազմանշանակ: Հանդիպում են **ք**-ով և առանց **ք**-ի կազմություններ, որոնցում **ք**-ն կարող է տարբեր գործառույթ ունենալ. «Էդ թևավոր մանր **հարամիքը**...» (Հդ, 372), «Նա բռնում էր մեծ

<sup>12</sup>Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Մ. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, Հնչյունաբանություն և բառագիտություն, Ե., 1979, հ. 1, էջ 378:



**կուրծ** ունեցող այծերից մեկին» (ԼՂ, 7), «Եթե ձեռքը խաչ էր անում **կրծքին...**» (ԼՂ, 5): Այդպիսի տարբերակման արդյունք են նաև որոշ կրկնադիր կազմությունների կիրառությունները, երբ առկա են **ք** և **եր** մասնիկները. «Յողի ու քարի հետ կոխ բռնած, հոտադ-ռամիկ **տղերք** էին» (ԿՇ, 12), «Մանվելի ձեռքը կարծես մաքուր չէ, **փողբերքունը** փթաղ կա» (Ղ, 375): Ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ հոգնակերտ վերջավորություններով կազմությունները ևս շատ կան արձակում **գեղացիք, աղջկերք, կնանիք, ճամփեք** և այլն: Զ-ով այդպիսի ձևերը, ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, հանդիպում են խոսակցական ոճում. դրանցում ք-ի առկայությունը պայմանավորված է իմաստային լրացուցիչ տարբերություններով, համապատասխան նրբիմաստով<sup>13</sup>: Գործածված են նաև անհոգնական գոյականների հոգնակի կազմություններ. «Սաթեն տատի **կարոտների** համար» (ԱՆՍ, 279), «Ուրիշ գարուն էլ եկավ, ապա էլի **գարուններ**» (ԾԾԾ, 601):

Հատկանշական է **առկայացման կարգ**ն իր իմաստային-քերականական տարբերակներով, որոնք ձևավորվում են հողերի միջոցով<sup>14</sup>: Որոշյալ հողերի (ը,ն) կիրառություններն առանձնանում են բարբառին բնորոշ հատկանիշներով. «Երևի վախից է բռնել գելի **վզիցը**» (Ղ, 298), «**Գլխովը** ման տամ» (ՄԶԳ, 108), «Ես դուրս եմ գալու **մղակունը** աղոթք անեն» (Պ, 324): Հանդիպում են նաև անհող կիրառություններ, որոնք հիմնականում կրում են խոսակցական լեզվի ազդեցությունը. «Գնանք պահապան կանգնենք **մեր տան**, մեր օջախին, հողին հայոց» (ՄՍ, 49): Ցուցական հողի գործածությունը նպաստում է խոսքի սեղմությանը՝ արտահայտելով տարբեր նրբիմաստներ. «**Աշխարքս** մուրտառեց» (ՄԵ, 553), «**Գիշերս** անձրև է գալու» (Ղ, 211): Հերոսների խոսքում հատկապես շատ են ստացական հողերով կազմությունները, որոնց եզակի թվով ձևերը հանդես են գալիս հիմնականում եղանակավորող դարձվածների կազմում **արևդ կծեն, աչքիս վրա**: Իսկ ստացական հոգնակիով կազմությունները բնորոշ են բարբառներին և ժողովրդախոսակցականին, որտեղից էլ անցել են գրական լեզու. «Մյուսները **վիզները** կախել, խմում էին դաշտի ու անտառի տաք բույրերը» (ՄԳՄ, 273):

**Հուլովական համակարգը** արձակում արտահայտվում է գրական օրինաչափություններին համապատասխան, իսկ նկատվող շեղումները, որոնք բնորոշ են բարբառներին, ժողովրդախոսակցականին, ինչպես նաև գրաբարյան կազմությունները հերոսների խոսքում պայմանավորված են թեմատիկայով և ոճավորմամբ: Հանդիպում են ուղղականի՝ այլ հոլովական նրբերանգներով կիրառություններ. «**Ղուրսը** մութ է, հոգյա՛կա» (ԾԵ, 561), «Աչք ածեցի, **տունը** չէիր» (Ա, 48), «Թագավորը նստել է **Կաքավաբերդ**» (Ավ, 216): Սեռական հոլովն առանձնանում է բարբառային ձևերի կիրառությամբ. «Նստիր, **քվոր** տղա» (Զ, 349), «Չբեր **կնանոց** ոտքն էստեղից կտրվում չի » (Պ, 323), «Տանը թուրք կա, աղջի: Գնա **հորանց**» (ԶԹ, 595): Ժողովրդախոսակցական տարբերակին մոտենալու միտում են **ա**-ով վերջացող մի քանի բառերի սեռական հոլովաձևերի գործածությունները, ինչպես՝ **զուռնի, փեսի, տղի, երեխի**: Բարբառային իրողություն են հայցականաձև տրականի գործածությունները. «**Նշանածը** թաղեն, հա՛» (ՀՍԱ, 143), «Հետո արի ոչխարն ու **գողը** գտի» (Ղ, 369): Բացառական հոլովի կիրառություններն ուշադրության են արժանանում արտահայտած այլ հոլովական իմաստային նրբերանգներով, որոնք հատկանշվում են ժողովրդախոսակցականին բնորոշ սեղմությամբ. «**Բանից-մանից** ուտո՞ւն ա» (ՂԴ, 348), «Դուրս ընկած **սկորից, բանից** ունի՞» (ՂԴ, 346): Գործիական հոլովով գոյականները հանդես են գալիս

<sup>13</sup>Տես Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 179:

<sup>14</sup>Տես Ռ. Սկրտչյան, Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Ե., 1992, էջ 111:

փոխաբերության և փոխանունության նրբերանգներով, որոնք հիմնականում ունեն դարձվածային արժեք. «Ինքս ինձ **աղով** անում» (ՀՍԱ, 138), «Էդ մեկը **սրտովս չի**» (ՀՍԱ, 131), «**Երեխով** եմ» (ՀՅԱԶ, 280): Ներգոյական հուլովի կազմության լուրջ շեղումներ չեն նկատվում, բացառությամբ մի քանիսի, ինչպես, ասենք, վերացական գոյականների հոլովումը ներգոյականով. «Քիչ չբերներ եմ իմ **օրում** բերել էստեղ» (Պ, 324): Կամ **մենք** անձնական դերանվան ներգոյականի կազմությունը. «**Մերումն** սկի նշանդրեք էլ չի» (ՄՍ, 65):

**Ածականի** կիրառություններից առանձնանում են գույն արտահայտող ածականների փոխանվանական գործածությունները (հիմնականում մակդրային): Դրանք առանձնանում են ասելիքի, երևույթի պատկերավոր ընդգծումով և զեղագիտական բնութագրումով՝ **կապույտ-ճերմակ լռություն, սպիտակ լռություն, ճերմակ մեղք, ճերմակ մահազդ, կապույտ հայացք, կապույտ բարկություն**:

**Թվական անուն:** Ունենալով գործածության մեղ ոլորտ՝ արձակում հատկանշվում է ոճական ակտիվությամբ: Գործածված են կոնկրետ թվականները ոչ սովորական ձևով արտահայտելու հնարներ. «**Վեց անգամ տասը** գարուն է անցել այդ օրից, **յոթն էլ վերադիր**» (ՀԿ, 553), «Գնել եմ **հինգ ու յոթանասունով**» (ՈՒԴ, 407): Դարձվածային արժեքով և հեղինակային մոտեցմամբ նորովի է թվականների գործածությունը բարդության կազմում. «Բա **երկուհոգի դառնալը** հեշտ բան ես համարո՞ւմ» (Պ, 325), «Շունը **մի երկու բերան հաչաց**» (ՔԶ, 226): Երբեմն էլ հենց ինքնուրույն ձևով զուգորդում է թվականը բային, որը գրական լեզվին բնորոշ չէ. «Պորտաքարի սուրբ գնալու մասին ոչ մի տեղ **բերանդ երկու չանես**» (Պ, 325):

Հերոսներին անհատականացնելու և նրանց խոսքը տիպական դարձնելու նպատակով հեղինակը գործածել է **դերանունների** բարբառային, խոսակցական տարբերակները (ուղիղ և թեք). «Էն տրակտորը **քո՛ւնն** ա, թե չէ» (ՄԶԳ, 111), «Էլի **իրա** ուրախությունը **իրա** տանն է գտնում, **իրա** երեխաների ու կնկա հետ» (Հ, 394): Բարբառներում հաճախակի **ոչինչ** ժխտական դերանվան փոխարեն գործածվում է **հեչ** պատասխանական բառը. «**Չե՛չ**,- Եղիշը նույնիսկ չնայեց նրա կողմը:- Ոնց թե **«հե՛չ»**...արջը սպանեցիր ու **«հե՛չ»**...» (ՕՅ, 191): Հարցական **ո՞վ** դերանվան բարբառային գործածություններ ևս կան. «Ադա, դու **ունանցի՞ց** ես» (ՄԶԳ, 97):

**Բայ:** Հետաքրքրական են բազմիմաստ բայերի ու բայական հոմանիշ ձևերի կիրառությունները փոխաբերական կամ դարձվածային արժեքով. «Ես քո **ճամփան էի պահում**» (ՕՀ, 205), «Մերին **փշովեց**» (ՕՀ, 207): Հանդիպում են նաև նույն արմատի կրկնադիր գործածություններ. «Կին ու աղջիկ **լաց լացեցին** իրենց լեռների հանգով, **սուզ սզացին** երգածայն ու զիլ» (ՀԿ, 555):

Բայի եղանակաժամանակային ձևերի ոճական կիրառություններն ավելի բազմազան են: Այսպես՝ **ներկա** ժամանակի իմաստ արտահայտվում է. ա) նախադասության ստորոգյալը դրվում է ենթադրական եղանակի ապառնի ժամանակով, և ներկա ժամանակի իմաստն այս դեպքում էլ կարող է ընդգծվել ներկա ժամանակ ցույց տվող մակբայների օգնությամբ. «**Ուր որ** է մինիստրը **կգա**» (ԶԱ, 370), «**Հիմա** դեղի կարոտներ **կգան**» (ԽՀԼ, 81), բ) երբ ստորոգյալը բաղադրյալ է, **լինել** բայի ենթադրական ապառնի գործածվում է է հանգույցի փոխարեն ենթադրությունը շեշտելու նպատակով<sup>15</sup>. «**Մի քսանհինգ տարի կլինի**, որ ապրում է ձորում» (ԻՀՄ, 315), գ) խոսողի հանդգնումը, ենթադրությունը խոսելու պահին ներկա ժամանակահատվածում, գործողության իմաստն ընդգծելու միտումով գործածվում է **պետք է որ** կապակցությունը՝ «Այսպիսի մատներով արված

<sup>15</sup> Տե՛ս Ն. Պառնասյան, Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում, Ե., 1986, էջ 202:

պատվաստը **պետք է որ բռնի»** (ՕՅ, 203): **Անցյալում** կատարված-ավարտված գործողություններ նկարագրելու համար գործածվում է նաև, այսպես կոչված, պատմական ներկան խոսքը կենդանի դարձնելու նպատակով. **«Անցյալ տարի** Արդար Հաբուղը սարի ֆերմայից **գալիս է քաղաք»** (ՄԵ, 551): Ըստ օրինաչափության՝ անցյալ կատարյալ ժամանակի ժխտական ձևով ներկայացվում են անցյալում չկատարված գործողություններ, եղելություններ: Սակայն ժողովրդախոսակցական լեզվում նման ձևով ցույց է տրվում կատարված գործողություն **մինչև** շաղկապի հետ գործածվելով. **«Մինչև չգնացի, չտեսա, որ էշին գտել են, չհանգստացա»** (Հ, 299): **Ապառնի** ժամանակի իմաստ են արտահայտում սահմանականի ներկայի ձևերը. **«Տղաներ,- ասում է հրամանատարը,- գնում ենք հարձակման»** (ԵՏՕ, 643): Խոսելու պահից անմիջապես հետո կատարվելիք գործողություն նկարագրելու նպատակով ժողովրդախոսակցականում գործածվում է սահմանականի անցյալ կատարյալը. **«Հինի մարգերը փուլ ատեց»** (ՄՁԳ, 101): Առանձին դեպքերում էլ, հատկապես երկխոսություններում, կարող են զուգակցվել հրամայական և ըղծական բայածներ. **«Մի անգամ էլ սրսկիր,- Սրսկենք»** (ՕՅ, 206), **«Ուրախչեք արա, Սաղաթել,- Անեն»** (ՄԵ, 502):

Հատկանշական են հրամայական եղանակի **ր-ի** անկումով կազմությունները. **«Կուզես խփի ինձ, սպանի»** (Անդ, 134), արգելական հրամայականի բարբառային կիրառությունները. **«Մի վախճար»** (Ամռ, 40), **«Ամչիլ մի»** (ՇԱ, 482): Այս կարգի ձևերի կանոնական կամ հնացած լինելու վերաբերյալ հետաքրքիր են Յ. Ավետիսյանի դիտարկումները<sup>16</sup>: Բարբառային իրողություն են օժանդակ բայի շարադասության խախտումները. **«Գիտում չեն, տեսել չեն»** (ԼՀ, 9), նաև օժանդակ բայի ա-ով ձևերի գործածությունները. **«Հրես ամսից ավել ա, տեղ ա բողել, գնացել»** (ՀՍԱ, 143): Հանդիպում են կիրառություններ, որոնցում կատարվում է սեռային փոփոխություն՝ պայմանավորված գործողության կատարման համար բայի խնդիր պահանջելով. **«Չայրը խուժում է դիմացի տան բաց պատուհանը, զնգացնում լվացած պղինձները»** (ՄԵ, 554):

**Զթեքվող խոսքի մասերի** գործածությունները ոճական տեսանկյունից հարուստ չեն, քանի որ հիմնականում հատկանշվում են նրանց քերականական առանձնահատկությունները, այլ ոչ ոճական-արտահայտչական երանգավորումները<sup>17</sup>: Կիրառության դիպուկությամբ և հատկապես համեմատություններ կերտելու տեսակետից առանձնանում են **ձևի մակբայները**. **«Օւռուռուռ, անվարժ, բայց սրտանց քայլեցին աղջիկները»** (Անդ, 235): Շատ հաճախ հեղինակը մակբայները փոխարինում է այլ խոսքի մասերով, մասնավորապես մակբայական դերանուններով: Շատ ակտիվ է **այդպես** դերանունը. **«Այդպես հողից մանուշակն է հանկարծ հանում գլուխը...Այդպես միանգամից բոցերով է բռնկվում չորացած եղեգնուտը»** (ԱՏ, 227):

**Կապերի** կիրառություններն արձակում հատկանշվում են ոչ միայն արտահայտած հարաբերության համապատասխան իմաստներով, այլև երկրորդական նշանակություններով: Ժամանակի հարաբերության իմաստով են կիրառված տեղի **մոտ, վրա** կապերը. **«Կիրճի ճանապարհը ավարտելու վրա էին»** (Հ, 208), **«Արդեն կեսօրին մոտ էր»** (Պ, 323): Հեղինակային ինքնատիպությամբ առանձնանում են համեմատության նրբերանգով փոխաբերական այնպիսի

<sup>16</sup>Յ. Ավետիսյան, Տեղաշարժեր ժամանակակից հայերենի բայի խոնարհման համակարգում, Բանբեր, «Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն», Ե., 2013, N 2, էջ 33-42:

<sup>17</sup>Տես Լ. Եգեկյան, նշվ. աշխ., Ե., էջ 291:

կառույցները, որոնցում **նման, պես** կապերը կարելի է վերականգնել. «Ուլիկի մագերը գառան գանգուր էին» (ԽՅԼ, 74):

**Շաղկապների** գործածության առումով հետաքրքրական են ժողովրդախոսակցականին, բարբառներին բնորոշ ձևերը: Այդպես է **թե** շաղկապի այն կիրառությունը, երբ հանդես է գալիս մեջբերվող խոսքը հեղինակայինին կապող ասացական բայի դերով. «Ծիծաղեցինք, վերջը Սաբոն, **թե** Ավետիս, վախի՛ մի» (Հ, 298): Պատճառի, հիմունքի, ժամանակի և այլ իմաստային նշանակությամբ է հաճախ գործածվում **որ** շաղկապը. «Գոհ մնաց, **որ** Մանուշի բրիգադը լավ է աշխատում Սշկահանդում» (Հ, 99), «Բայց նա գոհ էր, **որ** մարդկանց մոտ ամոթով չմնաց» (Հ, 315), «**Որ** մութը վրա տվեց, կրակ արինք, կշտին պագեցինք» (Հ, 297):

**Վերաբերականները** առանձնանուն են խոսքին որոշակի երանգներ հաղորդելու տեսանկյունից. «Շուռ եկ, **իրե՛տ է՞**» (Պ, 323), «**Գոնյա** դու գնա, թե չէ մեր Ավետիսը կխռովի» (Հ, Ա, 228), «Դու **խսկի** խոսեցի՞ր բրուտի աղջկա հետ» (Ավ, 224):

Բնության երևույթների իրական վերարտադրման ու պատկերման գործում անմասն չեն նաև **ծայնարկություններն** ու **բնածայնական** բառերը: Արձակում ծայնակությունների գործածություններ շատ կան, որոնք արտահայտում են անենատարբեր զգացումներ՝ հաճելիություն, զարմանք, դժգոհություն, ակոստանք և այլն: Հաճախադեպ են ծայնարկությունների գործածությունները հարադրության կազմում. «**Ախ ու վիշ արավ** կռվում «փչացածների» համար» (ՀՄԱ, 131), «**Հայհարայ արի...**» (ՄԵ, 552): Զայնարկություններին են հարում նմանածայնական որոշ բառեր, որոնք նույնպես անվանումներ չեն, այլ կենդանիների արտաբերած ձայնի և առարկաների տարբեր տեսակի շարժումներից առաջացած ձայների մոտավոր վերարտադրություններ: Բնածայնությունները տարբերվում են դատողական հատկանիշի բացակայությամբ<sup>18</sup>. «Հրացանս ձեռաց կալա ու...**թրախկ**» (Հ, 210), «Երկինք է սլանում նաև եկեղեցու զանգերի դողանջը՝ **դի՛ն-դան**» (ԽՅԼ, 37): Սրանք առանձնանուն են իրենց բառակազմական արժեքով. ավելի շատ են մտնում բառական այլ կազմությունների մեջ՝ կազմելով գոյականներ, ածականներ, բայեր՝ **շրխկոց, դոմբոց, թրխկոց, փոթկոց, ծվծվան, շփշփալի, տմտմբալ, կաթկթալ** և այլն:

**Շարահյուսական առանձնահատկությունները** ենթաբաժնում առաջին հերթին ձգտել ենք բացահայտել գրողի կողմից շարահյուսական իրողությունների ընտրության ու նրանց կապակցման եղանակները, դրսևորման միջոցները, տարատեսակ բանադարձումները: Ս. Խանգադյանի գեղարվեստական խոսքի քննությունը կատարելիս նկատի ենք ունեցել ամբողջ շարահյուսական մակարդակը՝ համապատասխան իրողություններով: Բայց օգտագործված միջոցների առատությունն ու բազմազանությունը, ընդգրկումն ու աշխատանքի ծավալին ներկայացվող պահանջը համապատասխանեցնելու համար ստիպված ենք եղել նախ որոշ սահմանափակումներ կատարել: Հետևել ենք նաև Վ. Համբարձումյանի այն ցուցումին, թե հաճախ շարահյուսական միավորները «ստանում են ոճական արժեք՝ կապված տվյալ միավորի դրսևորման հաճախականության և անենակարևորը՝ հեղինակի ոճական վերաբերմունքի հետ»<sup>19</sup>: Այս յուրահատկությունը նկատվում է և Ս. Խանգադյանի լեզվում, որտեղ շարահյուսական միավորների ոճական երանգավորման հիմք են դառնում ոչ միայն կառուցվածքային տարբերությունները, այլև դրանց զանազան զուգորդումները, կրկնություններն ու հաճախական գործածությունները տվյալ իրադրության մեջ,

<sup>18</sup>Տես Ս. Աբրահամյան, Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Ե., 1965, էջ 555:

<sup>19</sup>Վ. Համբարձումյան, Հոփան Սամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը, Ե., 2013, էջ 118:

տվյալ համատեքստում: Ատենախոսության մեջ տեղ են գտել հետևյալ իրողությունները:

**1. «Միակազմ նախադասություններ»:** Սրանք միաբևեռ կազմություններ են, ունեն հնչերանգ ու հնչերանգային ավարտվածություն, այդ իսկ պատճառով էլ բառերի տվյալ կապակցությունը արտահայտվում և ընկալվում է որպես ավարտված, լրիվ նախադասություն: Մինչև վերջերս կարելի էր անվարտ պնդել, որ ժամանակակից հայերենի միակազմ նախադասությունները շատ ավելի համակողմանի ու ամբողջական են ուսումնասիրված, քան որևէ այլ փուլինը (ասենք՝ գրաբարյան): Բայց Գ. Խաչատրյանի<sup>20</sup> և Ս. Հայրապետյանի<sup>21</sup> աշխատությունների երևան գալուց հետո չեզոքացված է ուսումնասիրության ոլորտում նկատվող այդ անհամամանությունը: Հանդիպում են տարատեսակ միակազմ նախադասություններ՝ որպես ընդհանուր ոճավորման բնորոշ տարրեր: Գործածված են վիճակային կամ բուն անենթակա միակազմ նախադասություններ, որոնք արտահայտում են մթնոլորտային երևույթներ, տարվա եղանակներ և այլն. **«Աշուն էր, խոր աշուն»** (Պ, 327), **«Գարնան զնգացող մայրամուտ էր»** (ՎԳ, 371): Հետաքրքրական են դիմավոր միակազմ նախադասությունների կիրառությունները բարդ նախադասության կազմում. **«Արևոտ օր է, ճամփան բռնի, գնա»** (ՔԲ, 5), **«Հենց որ մթնում է, հովիվները նստում են փարախում»** (ն.տ.): Տարածված են սահմանական եղանակի ներկայի և անցյալ կատարյալի հոգնակի երրորդ դեմքով անորոշ դիմավոր նախադասությունները. **«Ասում են»** իր ապուլապան է այս կամրջով առաջին հարը բերել իրենց հին տունը» (Կ, 525), **«Ճաշկերույթ տվին վրանների մեջ»** (ԻՀ, 196): Արձակուն բայական անդեմ նախադասությունները անվանականների համեմատ քիչ են, կարող են արտահայտել առաջադրանք, հրաման, հարցում. **«Օգնիր՝ բնակարան, գրանցվել, տպագրվել»** (ԻՀ, 233), **«Ինչո՞ւ սև հագնել»** (Քջ, 267), **«Դեմյան երշովին հենց հիմա ուղարկել»** (ԵՏՕ, 519): Անվանականների դերը հատկապես մեծ է պատերազմական թեմատիկայով երկերում (**«Մեր գնդի մարդիկ», «Երեք տարի և 291 օր»** վեպերում), որոնցում հաճախ հնչերանգի հետ հանդես է գալիս նաև խոսքային միջավայրը<sup>22</sup>: Հրամայական հնչերանգի դեպքում դրանք դառնում են կոչ, պատվեր, հրաման. **«Ուռքի՛: Շան որդիներ»** (ՄԳՄ, 129), **«Տասը ականով: Կրա՛կ»** (ԵՏՕ, 515): Հանդիպում են հաստատական, ժխտական և այլ վերաբերմունք արտահայտող բառ-նախադասություններ: Կերպարների խոսքում **այո, ոչ** պատասխանական բառերի փոխարեն հաճախադեպ են դրանց **հա, չէ** խոսակցական տարբերակները. **«Աչքովդ տեսա՞ր: - Հա: - Կա՞լ էր անում: - Հէ՛»** (ՎԵ, 495):

**2. «Երկկազմ նախադասություններ»:** Սրանք շարահյուսական այնպիսի միավորներ են, որոնց գլխավոր անդամները ստորոգման հարաբերության մեջ են գտնվում, և այդ հարաբերությունը հավասարական է<sup>23</sup>: **Պարզ** նախադասությունների առավել հաճախադեպ գործածություններ բնորոշ են հիմնականում վիպակների լեզվին: **«Մատյան եղելությանց»** վիպակի երեք էջի սահմանում (485-487) կատարել ենք վիճակագրական հաշվում առանձնացնելով պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասությունները: Վերջիններիս քանակը գերակշռում է (31/3-ի հարաբերությամբ): **Բարդ** համադասական նախադասությունների բաղադրիչները քերականորեն համագոր են և կապակցվում են երկու եղանակով՝ **համադասական**

<sup>20</sup> Գ. Խաչատրյան, Գրաբարի միակազմ նախադասություններ, Ե., 2002, էջ 126-145:

<sup>21</sup> Ս. Հայրապետյան, Գրաբարի շարադասությունը, Ե., 2005, էջ 206-227:

<sup>22</sup> Տես Ս. Գյուլբուրդյան, ժամանակակից հայոց լեզու, Ե., 1988, էջ 130:

<sup>23</sup> Ս. Արրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, շարահյուսություն, Ե., 1975, մ. 2, էջ 131:

**շաղկապներով և շարահարությամբ:** Շարահարությամբ խոսք կառուցելը հատուկ է ժողովրդախոսակցական ոճին, քանի որ շարահյուսական հարաբերություններ արտահայտելու գործում կարևոր է հնչերանգի դերը<sup>24</sup>. «Յրապարակը **լուսավորվեց, աղմկեց, դողդաց խենթ»** (ԽՂԼ, 447): Բարդ համադասական նախադասության բաղադրիչներն իրար հետ կապվում են տարբեր հարաբերություններով՝ **միավորական** (համաժամանակություն և տարաժամանակություն). «Կարանքին **վեր կացավ, կանչեց** Կաշ Բիխունուն, **հրամայեց** իրեն տանել կառուցվող քաղաքը» (ԹՅ, 248), «Յարսը **կրակ է արել**, խնձոր **խորովել** և կրակ սրտով **սպասում է** ջահել ամուսնուն» (ՄԵ, 523), **ներհակական**, որոնցից տիպական են **բայց, սակայն** շաղկապների փոխարեն **ամա**-ով նախադասությունները. «Սոփի աքորը երդում էի տվել, **ամա** Պորտաքարի քարատակը մտքիցս դուրս չի գալիս» (Պ, 328), **տրոհական**, որը գերազանցապես արտահայտվում է **կամ** շաղկապով և նրանով կազմված բաղադրյալ շաղկապներով: Յերոսների խոսքում կարող է հանդես գալ խոսակցական լեզվի **յա բառը**: «**Յա** մի ճար արա, **յա** պիտի գնամ Լաչին քերծից ընկնեն տակը» (Պ, 322), **հավելական**՝ «Ես ու քուռակը միասին կմեծանանք, փայտ կբերենք անտառից, խոտ էլ» (ԱՎ, 40):

Յանդիպում են երկրորդական նախադասությունների բոլոր տեսակները. ա) գլխավոր անդամների պաշտոն կատարող (ենթակա և ստորոգելի երկրորդական նախադասություններ). «Պարզ **երևում էր**, որ գերմանացիները պատրաստվում են նոր հաձակում սկսել» (ՄԳՍ, 146), «Պորտաքարն **էդ ա, որ կա**» (Պ, 323), բ) գլխավոր նախադասության գոյականական անդամին լրացնող երկրորդականներ (որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ). «Չէին ուզում ուտել **այն մեռելահացը, որ ողողված էր հագուցյալի աղի արցունքով**» (ԽԽ, 336), «**Յույս չունեին, որ երկար կմնան այդտեղ**» (ՄՍ, 752), «**Ղու, որ մեծացել ես այս գյուղում**, հեռանո՞ւմ ես» (Յ, 466) և գ) գլխավոր նախադասության բայական անդամին լրացնող երկրորդականներ (խնդիր և պարագա). «Ոսկեղենը **զգաց, որ** Սունբաթի ձայնը դողաց» (ՄԶԳ, 100), «Ես **սպասում էի, որ պիտի առաջվա պես սիրված լինեի քո կողմից**» (Յ, 352), «**Յենց որ** Սամվել դային գալիս, նստում էր նրանց մեջտեղը, Մի Կեղ Մանգասարը գրպանում փափկած կոնֆետ է հանում» (ՄԵ, 530), «Ընտանիքն **այնտեղ է, որտեղ կա իսկական սեր**» (Յ, 351), «Սրանից հետո **այնքան** նայես, **որ ձանձրանաս**» (Յ, 11), «**Որ** լուսանում է, արևը խփում է թիկունքին, **որ** արևը խփում է թիկունքին, իրա ստվերը երկարում է» (ԱՎ, 156), «Ես չեմ արգելի նրան, **թեև դրա համար հրամանատարությունից ինձ մի լավ կիսանի**» (ԵՏՕ, 522):

Խոսքի պատկերավոր արտահայտմանը նպաստում են նաև բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության տարբեր տեսակները. «Մերին **թվաց, թե ինքը իման կայայի այն մեծ բերկրանքից, որ խուժեց իր սիրտը**» (ՕՅ, 203) (ենթաստորադասական), «Նրա սերը սաստկանում էր մանավանդ **այն ժամանակ, երբ** ամուսինը բարկանում էր իր վրա ու օրերով հետը չէր խոսում» (Պ, 319) (համաստորադասական), «Լյժմ, **երբ դեպի այգիներ էր գնում Նռան Ավիսը, անպայման անցնում էր Ծովերի նոր տան մոտով, թեև ճանապարհն այդ կողմով չէր**» (ԶԾ, 268) (տարաստորադասական) և այլն:

Յետաքրքրական է, որ վիպակների լեզվում թեև ավելի հաճախադեպ են պարզ նախադասությունների տարատեսակ գործածությունները, սակայն առանձին դեպքերում որոշ վիպակներում նկատվում է հակառակ երևույթը, այսինքն՝ գերակշռում են բարդ նախադասությունները: Օր.՝ այդպիսին է «Վեց գիշեր»

<sup>24</sup> Տե՛ս Ս. Աբրահամյան, Ն. Պառնայան, Յ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 1976, հ. 3, էջ 612:

վիպակը, որի երեք էջի սահմանում (328-330) կատարել ենք վիճակագրական հաշվում՝ հանդիպելով բարդ նախադասությունների 42 գործածություններ, որոնցից 13-ը շաղկապական կապակցություններ են, իսկ 29-ը՝ շարահարակալան: Ընդ որում՝ շարահարությամբ կապակցվածներից 18-ը լրիվ, իսկ 11-ը մասնակի շարահարությամբ բարդ նախադասություններ են: Բերենք մի քանի օրինակներ. «Կուտակ-կուտակ բանակները ոռնում էին արյան հաճույքից, և նրանց ոտք դրած տեղերն ամայանում էին անխնա» (էջ 330), «Մութը փաթաթվեց նրանց ոտքերին, թանձր շնթկեց, մնաց» (ն.տ.), «Ողբալին այն է, որ ահա գյուղերն ավերվում են, արտերը տրորվում, այգիները կտրտվում» (էջ 328) և այլն: Մինչդեռ նույն էջերում պարզ նախադասությունների գործածությունները 27 են: Ինչպես՝ «Ողջ գիշեր քնել չկարողացավ» (էջ 328), «Գուցե երազը ցնդել է» (էջ 330) և այլն:

**3. «Հավելական կապակցություններ»:** Հավելական կապակցություններում հավելվող մասը հանդես է գալիս հիմնական արտահայտությունից հետո, որը գրավոր խոսքում հաճախ արտահայտվում է վերջակետով: Մեծ է հնչերանգի ու տրամաբանական շեշտի դերը, որի շնորհիվ էլ ընդգծվում է տևական դադարից հետո հանդես եկող հավելվող հատվածը<sup>25</sup>. «Խաղաղ է Սևանա լիճը: **Քնա՛ծ**» (Հ, Բ, 389): Իբրև հավելվող մաս՝ հիմնական մտքին կարող են կապվել հաղորդակցային և կառուցվածքային տարատեսակ նախադասություններ. «Յոգեբանական հարազատություն կար նրա և կաղնու միջև: **Վարպետը մեր պոեզիայի դարավոր կաղնին էր**» (ԻԴ, 136): «Վեջին անգամ պիտի ջրի: **Ուշ է: Աշուն է**» (ԼԴձ, 515): Ըստ շարահյուսական հարաբերության առանձնանում են համադասություն ու ստորադասություն արտահայտող հավելական կապակցություններ. «Մոսկվայի միջնաբերդ-կրեմլում յոթանասուն տաճար, եկեղեցի ու մատուռներ կային, **նաև շքեղ էր Կոփածո պալատը**» (Շ, 419), «Մարդն ի բնե բնության մյուս արարածներից ամենից դժբախտն է: **Դժբախտ է, որովհետև զգում է մահը**» (ԻԴ, 134):

**4. «Նախադասության հաղորդակցային տիպեր»:** Բավարար համարելով տարբեր առիթներով պատմողական, հրամայական և բացականչական տիպերի մասին ասվածը՝ այս ենթաբաժնում հատկապես դիտարկվում են հարցական նախադասությունները: Բուն կամ **հավաստիական և երկրնտրանք** արտահայտող հարցումները բավականին շատ են՝ կապված երկխոսությունների ձևավորման հետ. «Կարճ-մարճ, պնդակազմ մարդ է, **չէ՞**» (ԻԴ, 195), «Նույնիսկ չհարցրեց՝ դա **հաճելի՞ է ինձ, թե՞ ոչ**» (ԱՊղ, 67): Ոճական-արտահայտչական հզոր լիցք են հաղորդում **ճարտասանական կամ հռետորական (հարցաժխտական)** նախադասությունները: Սրանց գործածությամբ ընթերցողի ուշադրությունը կենտրոնանում է տվյալ երևույթի արտահայտման, պարզաբանման վրա. «Զարմանալի բան է՝ **մի՞թե մոր կաթի հետ է այս խանդը մտնում մարդու եռթյան մեջ**» (ՍԼ, 101): Ժխտական կառույցով ձևավորված ճարտասանական հարցումով տրվում է հաստատական միտք. «Դու զանգեզուրցի այն **տղան չե՛ս**» (ԻԴ, 119): Հեղինակը հմտորեն գործածել է հարցական այնպիսի նախադասություններ, որոնք բնույթով ներքին խոսք են հիշեցնում. «Հիմա էլ որսկան Հակոբի ասածներն են **պտտվում գլխիս մեջ**. «Կի՞նես առնելու դրան...**Ինչո՞ւ «դրան»**» (ԿԱ, 212): Հարցական նախադասությունները հաճախադեպ են հատկապես պատմվածքներում: «Օտար հավքը» պատմվածքում (190-207) կան հարցական նախադասությունների 92 գործածություններ, որոնցից 5-ը՝ հավաստիական, 58-ը՝ լրացական, 29-ը՝ հռետորական: Իսկ «Արաքսը պղտորվում

<sup>25</sup>Ն. Սարգսյան, Հավելական կապակցությունները ժամանակակից հայերենում, Լեզվի և ոճի հարցեր, Ե., 1982, հ. 6, էջ 254:

է» վեպի նույն քանակությամբ էջերուն (102-119) հանդիպում են 34 կիրառություններ, որոնցից 24-ը լրացականներ են:

**5. «Միջանկյալ և ներդրյալ կառույցներ»:** Բավականին շատ են գործածված միջանկյալ և ներդրյալ կառույցները (բառեր ու բառակապակցություններ, նախադասություններ ու արտահայտություններ): Հաճախադեպ են միջանկյալ նախադասությունները, որոնք, հիմնական նախադասության հետ չունենալով շարահյուսական կապ, առանձնանում են հնչերանգով՝ պահպանելով իմաստային հարաբերությունը<sup>26</sup>: Սրանք նշում են խոսողի վերաբերմունքը, տալիս տարաբնույթ գնահատականներ արտահայտվող մտքի նկատմամբ՝ խոսողի հաստատական, հավանական կամ երկբայական վերաբերմունք, հաղորդվող փաստի առումով՝ զարմանք, զղջում, մատնանշում հաղորդման աղբյուր և այլն. «**Չէ, էլի փառք աստծուն, միայն մի գոհ ունենք**» (ԵՏՕ, 482), «**Բենիամինը տասնվեց տարեկան է (մեռնե՛մ անունի՛ն)**» (ԽՅԼ, 38): Կան պարզ և բարդ կառուցվածքի միջանկյալ, ներդրյալ նախադասություններ. «**Շուխ Իլդիզ Հանընը կցնծա: (Օ՛, վերջապես մի խելոք գտնվեց այս խելագար աշխարհում)**» (ԽՅԼ, 49), «**Կուզեմ ապրել, տեսնել քսաննեկերորդ դարը (տեսնենք, թե այդ տարին ինչ կբերե մարդու համար)**» (ԻՀ, 357): Ներդրյալ բառերի գործածությունները հատկանշվում են դրսևորված իմաստային բազմազանությամբ (ժամանակի, տեղի, անվանողական, ճշգրտող, օտար բառեր բացատրող և այլն): Դրանց կիրառությունը առավելապես նկատելի է հուշագրությունների, առանձին պատմվածքների ու վիպակների մեջ:

**Եզրակացություններ:** Ս. Խանզադյանի արձակի լեզվաոճական համակողմանի ուսումնասիրության արդյունքում հանգել ենք մի շարք էական եզրակացությունների:

1. Գրողի լեզուն ունեցել է աստիճանական զարգացում: Հաշվի առնելով երկերի թեմատիկ, ժամանակային և լեզվաոճական առանձնահատկությունները՝ տարբերակվում է Ս. Խանզադյանի արձակի լեզվի զարգացման հինգ շրջան:

2. Խանզադյանական բառապաշարը հարուստ է ու բազմաշերտ: Հեղինակը հմուտ լեզվագագացողության շնորհիվ կարողացել է տեղին, դիպուկ գործածել և ոճական տարբեր հնարներ կերտել ինչպես համագործածական (չեզոք) շերտի բառերով, այնպես էլ ոչ համագործածական բառային միավորներով՝ ժողովրդախոսակցական, բարբառային, հնաբանություններ, նորաբանություններ և նորակազմություններ, փոխառություններ, օտարաբանություններ: Լեզվաոճական առումով ինքնատիպ լիցքեր են պարունակում բառերի իմաստային տարբեր տեղաշարժերը (մեմինաստություն, բազմիմաստություն, իմաստի ընդլայնում, նեղացում, շրջում), ձևաիմաստային հիմունքով առանձնացվող բառախմբերը (հոմանիշ, հականիշ, հարանուն և համանուն): Հեղինակը ոչ միայն լայնորեն օգտագործել է հայերենի բառակազմական եղանակներն ու միջոցները (բառաբարդում, հապավում, ածանցում), այլև վարպետորեն կերտել բառակազմական նոր կաղապարներ՝ համապատասխան զուգորդումներով: Ս. Խանզադյանի ստեղծագործությունը շռայլորեն հագեցած է ժողովրդական մտածողության արգասիք դարձվածային տարատեսակ միավորներով, առածներով, ասացվածքներով ու թևավոր արտահայտություններով, որոնք հնարավորություն են ընձեռել ստեղծելու ինքնատիպ ոճական դարձույթներ ու բանադարձումներ:

3. Քերականական իրողությունները լեզվաոճական առումով տարարժեք են: Ակնհայտ է, որ ձևաբանական իրողությունների դեպքում հեղինակը չի կարող ունենալ այն ազատությունը, որն առկա է բառային մակարդակում, որովհետև ձևաբանական կարգերն ունեն հստակ ձևակերպված նորմեր ու դրանց դրսևորման

<sup>26</sup>Տես Ս. Մարության, Միջանկյալ ու ներդրյալ արտահայտությունները և նրանց ուսուցումը, Ե., 1991, էջ 54:



միջոցներ, որոնք պարտադիր են բոլորի համար: Բայց այս դեպքում էլ, իբրև խոսքի հմուտ վարպետ, Ս. Խանգադյանը կարողացել է գտնել ուղիներ, որոնք որոշակի նրբիմաստային ու գեղագիտական արժեք են ձեռք բերել: Օգտագործվել են հատկապես ձևաբանական մի շարք կարգերի ընձեռած հնարավորությունները (տարբեր խոսքի մասերին բնորոշ հատկանիշներ, հոլովում, հոգնակիի կազմություն, առկայացում, խոնարհում և այլն): Առանձին դեպքերում նույնիսկ նորմից կատարված շեղումները դարձել են հերոսների տիպականացման, նրանց մտածողության ու հոգեբանության բացահայտման, խոսքի ոճավորման յուրատեսակ միջոցներ: Իհարկե, երբեմն դիտվում են նաև ոչ խրախուսելի գործածություններ: Շարահյուսական համակարգը, որ առավել ներուճակն է և ընդգրկումը, Ս. Խանգադյանի լեզվական արվեստում արտացոլված է ամենատարբեր դրսևորումներով: Հատկապես ինքնատիպ են միակազմ և երկկազմ մախադասությունների տարբեր տեսակներին, հավելյալ կապակցություններին, մախադասության հաղորդակցային տիպերին, միջանկյալ, ներդրյալ կառույցներին և շարահյուսական այլ իրողություններին առնչվող կիրառությունները:

4. Լեզվաոճական բոլոր տեսակի իրողությունները՝ անկախ նրանից, թե որ մակարդակին են առնչվում, Ս. Խանգադյանը լավագույնս ծառայեցրել է տարաբնույթ ու տարատեսակ դարձույթներ ու բանադարձումներ ստեղծելուն (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում, համըմբռում, չափազանցություն, նվազաբանություն, կրկնություն, շրջում շարադասություն և այլն): Ընդ որում՝ դրանց դիպուկությունն ու ինքնատիպությունը հաճախ բացահայտվում է հենց համատեքստում:

5. Ս. Խանգադյանի խոսքարվեստի քննությունը պահանջում է հաշվի առնել ինչպես լեզվաոճական տարբեր իրողությունների դրսևորած առանձնահատկությունները՝ կապված լեզվի տարբեր մակարդակներում հանդես գալու, այնպես էլ ժանրային և թեմատիկ պատկանելության, առանձին ստեղծագործություններին բնորոշ լինելու երևույթների հետ:

#### Ատենախոսության թեմայով հրատարակվել են՝

1. Խանգադյանական համեմատությունները «Ծարավել են, ջուր բերեք» վիպակում, «Միջազգային գիտաժողովի նյութեր», Նվիրված Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 40-ամյակին, Ա պրակ (հասարակագիտական), «Իրավունք» հրատ., Ե., 2009, էջ 264-267:

2. Հնաբանությունների լեզվաոճական արժեքը Ս. Խանգադյանի արձակում, «Ձահուկյանական ընթերցումներ» Հրաչյա Աճառյանի ծննդյան 135-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ, «Էդիթ Պրինտ» հրատ., Ե., 2011, էջ 209-215:

3. Հականիշ բառերի ոճական դրսևորումները Ս. Խանգադյանի արձակում, «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի զեկուցումներ», «Նաիրի» հրատ., Ե., 2011, էջ 76-83:

4. Սերո Խանգադյանի լեզվական արվեստը, «Ճարտարագետ» հրատ., Ե., 2010, 77 էջ:

5. Նորաբանությունները Ս. Խանգադյանի «Շուշի» վեպում, «Գորիսի պետական համալսարանի միջազգային գիտաժողովի աշխատանքների ժողովածու», Գորիսի պետական համալսարանի հրատ., Գորիս, 2010, էջ 245-252:

**Инга Ашотовна Маргарян**  
**Языковое искусство Серо Ханзадяна**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 «Армянский язык».

Защита состоится 2 ноября 2015 г., в 15<sup>00</sup> часов, на заседании специализированного совета по Лингвистике 019 ВАК при Институте языка им. Гр. Ачаряна Национальной Академии наук РА по адресу: 0015, Ереван, ул. Гр. Лусаворича 15.

Резюме

Произведения Серо Ханзадяна до сегодняшнего дня не удостоивались удовлетворительного языкового анализа. Необходимость в исследовании лингвостилистических особенностей прозы С. Ханзадяна обусловлена тем, что Ханзадян-один из выдающихся представителей армянской прозы, и в его произведениях представлены особенности языка художественной прозы конца двадцатого века.

Всесторонне исследовались лексикон, грамматические реалии, стилистически-выразительные формы армянской прозы, по возможности систематизированно проанализированы не только свойства и особенности, характерные для речевого искусства С. Ханзадяна, но и характерные для них черты: по языковым уровням, по жанровой принадлежности, иногда и по отдельным произведениям.

Научная новизна работы обусловлена выбором материала, а также тем, что всестороннему анализу подвергается язык прозы С. Ханзадяна в целом.

Материалом для исследования послужила в основном художественная проза Серо Ханзадяна.

Во введении обоснованы актуальность исследуемой темы, цель и задачи работы.

Первая глава – “Лексикологические реалии”, состоит из четырех частей: “Лексикологические особенности”, “Семиологические особенности”, “Морфологические особенности”, “Фразеологические особенности”, которые в свою очередь состоят из соответствующих параграфов. В первом отделе рассматриваются прикладные особенности общеупотребительных и необщеупотребительных слов и самые различные выразительные средства стилизации. Этот отдел в особенности важен изучением народно-разговорных слов, диалектных слов, историзмов, неологизмов, заимствований.

Речь Ханзадяна отличается обильным использованием диалектных слов и выражений. Встречаются в основном слова, выражения из горисского диалекта: “շնրալ” (беспощадно избивать), “իժահազ” (фальшиво кашлять), “սիսեմալալոր” (беременная), “մալալ” (синеглазый), “մալալալ” (вечерние сумерки), “լիսեմալ” (маленькая разновидность лисы).

Неологизмы, нашедшие место в прозе, выделяются различными структурными типами: “Ըրաճիւղը” (сотканный из палаток), “Ատուցիտուց” (вышивальщик) и др.

В отделе гносеологических реалий исследованы полисемия, моносемия, формально-смысловые особенности использования синонимов, антонимов, паронимов и омонимов.

В отделе реалии словообразования рассматриваются прикладные особенности типов, видов и средств словообразования, даются наиболее действующие формы.

В отделе “фразеологические реалии” исследуются фразеологические единицы, пословицы-поговорки, крылатые выражения, проклятья и клятвы. В прозе широкое применение имеют диалектные, разговорные фразеологизмы: «Հա՛նիս բա՛լեմ» (много болтать), «Խե՛ղը տա՛նը տա՛նը» (влюбиться, сойти с ума), «Դու՛ր ճա՛նփա՛ն ճե՛մ» (идти по ложному пути), а также авторские, личные словосочетания.

Вторая глава озаглавлена “Грамматические реалии”, она состоит из двух параграфов: “А. Морфологические особенности” и “Б. Синтаксические особенности”.

В первом параграфе представлены несколько реалий морфологической стилистики (свойства, характерные различным частям речи, склонение, составление множественного числа, спряжение и др.), которые той или иной направленностью своего стилистического оттенка нашли место в прозе С. Ханзадяна.

В параграфе “Синтаксические особенности” в первую очередь мы стремились выявить способы выбора писателем синтаксических реалий и их связи, средства проявления, разнородные словосочетания. Анализируя художественную речь С. Ханзадяна, мы имели в виду весь синтаксический уровень, с соответствующими реалиями. Встречаются разнородные односоставные предложения, как элементы, характерные для общей стилистики. Используются ситуационные или чисто безличные предложения. Глагольные безличные предложения малочисленны по сравнению с именными, могут выражать предложение, поручение, приказ, вопрос. Роль именных предложений в основном велика в произведениях на военную тематику.

Более частое применение простых предложений характерно в основном для языка повестей, а из сложных предложений в основном выделяются сложносочиненные. Построение речи путем сочинения свойственно стилю демократизации, поскольку в деле выражения синтаксических отношений важна роль интонации.

Среди придаточных типов предложений выделяются своеобразием и стилистическим разнообразием главным образом вопросительные предложения (утвердительные или собственные, дополнительные или риторические).

Довольно часто используются промежуточные и вставные конструкции (слова и словосочетания, предложения и выражения).

В отделе заключения представляются основные результаты исследования, сформулированы существенные заключения.

**Inga Ashot Margaryan**

**The Language Art of Works of Sero Khanzadyan**

Thesis for the degree of candidate of philological sciences  
on the speciality 10.02.01 – Armenian Language

The defense will be held on 2 November, 2015, at 15<sup>00</sup>, at the session of the HAC Academic Council on Linguistics N019 in the Institute of Language after Hr. Acharyan of the National Academy of Sciences RA (address: 0015, Yerevan, Grigor Lusavorich Street 15).

Summary

The works of Sero Khanzadyan haven't been examined sufficiently from the point of view of linguistics so far. The necessity of the linguistic-stylistic analysis of the prose by Khanzadyan is conditioned by the fact that the latter is a prominent figure in the Armenian prose and his works represent characteristic features of the late twentieth century prose language.

In the present research work the vocabulary, grammatical structures as well as stylistic-expressive means have been thoroughly studied. Not only the general characteristic features and peculiarities of Khanzadyan's works have been analyzed and structurally discussed but also their peculiar features have been ascertained according to linguistic levels, genre belongingness and sometimes according to separate works as well.

First of all, the scientific innovation of the given research is conditioned by the unique method through which the five phases of the development of the author's language have been determined and besides the author's prosaic language have been studied in a general sense.

As a material for the research basically the prose of the author has been used.

The thesis consists of an introduction, two chapters that have two sub-chapters, a conclusion, a bibliography and summaries.

In the Introduction the modernity of the topic as well as the objective and the issues of the work have been presented and justified.

The first chapter entitled as Lexicological Facts consists of four sections: Vocabulary Peculiarities, Semantic Facts, Word Formation Facts and Phraseological Facts. These parts are respectively divided into corresponding subsections.

In the first section the functional peculiarities and stylistic expressions of common and non common words have been discussed. This section gains its importance particularly due to the study of colloquialisms, dialect words, archaisms, neologisms and borrowings.

Khanzadyan's style becomes complete with the abundant usage of dialect words and expressions. Basically we come across words and expressions of Goris dialect such as «շնարակ» [shnatak] "to beat hard", «իծահազ» [itsahaz] "fake cough",

«պատճառավոր» [patcharavor] “pregnant”, «ճաղար» [tschaghar] “blue eyed”, «Ժանգառք» [jangark] “twilight”, «լիսեմնը» [lisemn] “small fox”.

The neologisms found in the prose are varied according to the type of their structure, for instance «եղեմատօն» [yedematsots] “divine”, «ազգփրկիչ» [azgaprkich] “saver”, «վրանահյուս» [vranahyus] “woven by tents”, «մատնեխատած» [matnehatats] “embroidered” etc.

The section of Semantic Facts studies themonosemantic, polisemantic words, semantic-structural features, functional peculiarities of synonyms, antonyms, homonyms and homophones.

In the Word Formation section the types, ways and means of word formation are discussed, more productive templates are presented.

The fourth section entitled as Phraseological Facts studies phraseological units, idioms and proverbs, blessings and curses. Some dialectical and colloquial idioms are widely used in the prose such as «չանա թակել» [chana takel] “to speak a lot”, «խելքը տանուլ տալ» [khelky tanul tal] “to fall in love”, «Դուզ ճամփան ծռել» [duz tchampan tsrel] “to take a wrong path”, etc, as well as units created by the author himself.

The second chapter of the thesis is entitled as Grammatical Facts which consists of two subsections: The Morphological Peculiarities in the prose of Khanzadyan and the Syntactic Peculiarities.

In the first subsection some morphological stylistic facts are presented, such as properties of different parts of speech, plural formation, declension, conjugation, etc. They are present in Khanzadyan’s works by all their stylistic manifestations.

In the subsection Syntactic Peculiarities we tried first of all to reveal the syntactic forms used by the author, their combination means and their different manifestations. While studying Khanzadyan’s prose we took into consideration all the syntactic levels for respective facts.

In the Conclusion the main findings and some inferences drawn from the research are summarized.